

«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության
վարչության նիստի

ք. Երևան

16 հունիսի 2020թ.

Մասնակիցների ցուցակ՝

- | | |
|------------------------|------------------------|
| 1. Ալբերտ Տոնեյան | 8. Իգոր Մկրտումյան |
| 2. Անդրանիկ Ալեքսանյան | 9. Լիաննա Գալստյան |
| 3. Աննա Կարախանյան | 10. Կոլյա Հովհաննիսյան |
| 4. Արամ Վերդյան | 11. Միսակ Խաչատրյան |
| 5. Արման Խաչատրյան | 12. Միրանուշ Վարդանյան |
| 6. Արման Ներսիսյան | 13. Քրիստինա Հակոբյան |
| 7. Գրիգորի Սադյան | |

Նիստին ներկա էին նաև կազմակերպության անդամներ՝ Գագիկ Սարգսյանը, Նարինե Դերձակյանը, Քրիստինա Բաբաջանյանը:

Նիստը նախագահում էր Իգոր Մկրտումյանը: Նիստի քարտուղար ընտրվեց Լիաննա Գալստյանը: Նախագահողը տեղեկացրեց, որ քվորումն ապահովված է և առաջարկեց հաստատել օրակարգը: Օրակարգի վերաբերյալ հնչեցին առաջարկություններ: Արդյունքում, հաստատվեց հետևյալ օրակարգը.

Օրակարգ՝

1. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրենի լիազորությունների ժամկետը երկարաձգելու մասին:
2. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության ժողով հրավիրելու մասին:

1. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրենի լիազորությունների ժամկետը երկարաձգելու մասին:

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ պարոն Իգոր Մկրտումյանը՝ նշելով, որ սույն թվականի հունիսի 18-ին լրանում է «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի գործադիր տնօրեն պարոն Անդրանիկ Ալեքսանյանի լիազորությունների ժամկետը և առաջարկելով երկարաձգել այն մեկ տարով: Այնուհետև ելույթ ունեցան պարոնայք Անդրանիկ Ալեքսանյանը և Արման Ներսիսյանը, ովքեր անդրադարձան վերջին մեկ տարվա ընթացքում կատարված աշխատանքներին՝ նիստի մասնակիցներին տեղեկացնելով նաև, որ կազմակերպությունում ավարտվել են ներքին ուսումնասիրությունների (ներքին աուդիտի) իրականացման աշխատանքները և սկսվել է արտաքին աուդիտ, որի ավարտից հետո կներկայացվի ամփոփ տեղեկատվություն:

Պարոն Մկրտումյանն իր հերթին շնորհանդեսի տեսքով ներկայացրեց տեղեկատվություն վերջին մեկ տարվա ընթացքում իրականացված մի շարք միջոցառումների վերաբերյալ:

Ելույթների ավարտից հետո «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի գործադիր տնօրեն պարոն Անդրանիկ Ալեքսանյանի լիազորությունների ժամկետը մեկ տարով երկարաձգելու առաջարկը դրվեց քվեարկության և ձայների 9 կողմ, 0 դեմ, 2 ձեռնպահ (վարչության 2 անդամ չեն մասնակցել քվեարկությանը) հարաբերակցությամբ ընդունվեց:

Որոշում՝ «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն Անդրանիկ Ալեքսանյանի լիազորությունների ժամկետը երկարաձգել մեկ տարով՝ մինչև 2021 թվականի հունիսի 18-ը:

2. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության ժողով հրավիրելու մասին:

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ պարոն Իգոր Մկրտումյանը: Նիստի նախագահողը ներկայացրեց կազմակերպության ժողովի վերաբերյալ իր, տիկին Լիաննա Գալստյանի և տիկին Քրիստինա Հակոբյանի համատեղ մշակած առաջարկությունները (որոնք են՝ ժողովն անցկացնել «Electionbuddy» էլեկտրոնային համակարգով՝ սահմանելով ժողովի անցկացման ողջամիտ ժամկետ՝ մի քանի օր, ժողովի օրակարգի նախագծում ընդգրկել մեկ հարց, այն է՝ կազմակերպության նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին հարցը, վարչության կողմից առաջադրել ժողովի նախագահողի, քարտուղարի թեկնածություններ և մինչև ժողովն անցկացնել քննարկում կանոնադրության նախագծի վերաբերյալ «Zoom» էլեկտրոնային հարթակի միջոցով) և դրանց հիմնավորումները:

Ելույթի ավարտից հետո ծավալվեց քննարկում, որի ընթացքում վարչության անդամները ներկայացրեցին իրենց տեսակետներն առաջարկությունների վերաբերյալ:

Քննարկման արդյունքում կազմակերպության վարչությունը, վերահաստատելով, որ կազմակերպության ժողովի քննարկմանն է ներկայացվելու իր կողմից հավանության արժանացած նոր խմբագրությամբ կանոնադրության նախագիծը, ձայների 11 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ (վարչության 2 անդամ չեն մասնակցել քվեարկությանը) հարաբերակցությամբ որոշեց սույն թվականի հուլիսի 1-ին ժամը 9:00-ին գումարել կազմակերպության ժողով՝ սահմանելով, որ ժողովն անցկացվելու է հեռակա կարգով՝ «Electionbuddy» էլեկտրոնային համակարգով՝ մինչև սույն թվականի հուլիսի 4-ը ժամը 21:00-ն և օրակարգի նախագծում ընդգրկելով մեկ հարց՝ «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին հարցը:


Կազմակերպության վարչությունը, ձայների 9 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ (վարչության 4 անդամ չեն մասնակցել քվեարկությանը) հարաբերակցությամբ որոշեց նաև որպես առաջիկա ժողովի նախագահող առաջարկել կազմակերպության նախագահ Իգոր Մկրտումյանի, իսկ ժողովի քարտուղար՝ ձայների 10 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ (վարչության 3 անդամ չեն մասնակցել քվեարկությանը) հարաբերակցությամբ վարչության անդամ Քրիստինա Հակոբյանի թեկնածությունները: Մինևսույն ժամանակ ձայների 11 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ (վարչության 2 անդամ չեն մասնակցել քվեարկությանը) հարաբերակցությամբ հանձնարարական տրվեց կազմակերպության նախագահ Իգոր Մկրտումյանին կազմակերպության անդամների համար «Zoom» էլեկտրոնային հարթակի միջոցով կազմակերպել հանդիպում, որտեղ կներկայացվի նոր խմբագրությամբ կանոնադրության նախագիծը՝ հանդիպման ժամկետ սահմանելով սույն թվականի հունիսի 25-ը ժամը 12:00-ն:

Որոշում՝

1. 2020 թվականի հուլիսի 1-ին ժամը 09:00-ին (ժողովի բացման ժամկետ) գումարել Կազմակերպության ժողով՝ հետևյալ օրակարգի նախագծով.
«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության նոր խմբագրությանը կանոնադրությունը հաստատելու մասին:
2. Մահմանել, որ ժողովն անցկացվում է հեռակա կարգով՝ «Electionbuddy» էլեկտրոնային համակարգով՝ մինչև 2020 թվականի հուլիսի 4-ը ժամը 21:00-ն (ժողովի փակման ժամկետ):
3. Առաջարկել Կազմակերպության ժողովին՝
 - 1) ժողովի նախագահող ընտրել կազմակերպության նախագահ Իգոր Մկրտումյանին,
 - 2) ժողովի քարտուղար ընտրել կազմակերպության վարչության անդամ Քրիստինա Հակոբյանին:
4. Կազմակերպության նախագահ Իգոր Մկրտումյանին՝ Կազմակերպության նոր խմբագրությանը կանոնադրության նախագիծը ներկայացնելու նպատակով սույն թվականի հունիսի 25-ին ժամը 12:00-ին Կազմակերպության անդամների համար «Zoom» էլեկտրոնային հարթակի միջոցով կազմակերպել աշխատանքային հանդիպում:


Որպես ոչ օրակարգային հարց, պարոն Արման Ներսիսյանի առաջարկությամբ, դիտարկվեց «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ում աշխատանքների կազմակերպումը հեռավար եղանակով շարունակելու հարցը: Կազմակերպության վարչության անդամները, հաշվի առնելով հանրապետությունում հայտարարված արտակարգ դրությունը և ՀՀ պարետի համապատասխան որոշումը, կարծիք հայտնեցին, որ անհրաժեշտ է շարունակել աշխատանքային գործունեության իրականացումը հեռավար եղանակով:

Նիստի նախագահող՝



Իգոր Մկրտումյան

Նիստի քարտուղար՝



Լիաննա Գալստյան